

ՄԵԾ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ



Թերթերը ծանուցին թէ Գորելեանի առթիւ ըլլալիք հանդանակութեան գլխաւոր ազբիւրններէն մին պիտի ըլլան Կեդր. Յանձնախումբի կողմէ յատկապէս պատրաստուած քօքարտներու, Կոմիտաս վրդ.ի դաշնակաձ ձայնատեսներու և ՔԱՐԹ-ՓՕՍԹԱՆներու վաճառուքը: Տպարանական Յանձնախումբին հրաւերով, ծանօթ նկարիչ Տիրան էֆ. Չրաքեան «քարդ բոսթայ»ներուն համար պատրաստելու վրայ է գեղարուեստական գործ մը որ պիտի ներկայացնէ հայկական հին ոճով խորանազարդ մը՝ սինկրու վրայ նստած, մէջտեղի տեսարանը կը կազմէ Օշական գիւղ եկեղեցին ուր Ս. Սահակ ամփոփուած է: Խորանազարդի երկու անկիւններէն կախուած են Սահակ Մերոպի և աւաջին տպագրիչ Մեղապարտ Յակոբի կենդանագիրները, իսկ խորանազարդին ճակատը՝ Մամուլի նախատիպ օրինակը: Ձայնատեսորի գին 5 դր. և քտոթ-բոսթալի (գին 1 դր.) իւրաքանչիւր օրինակ կնքուած պիտի ըլլայ Կեդր. Յանձնաժողովի կնիքով, գեղձումներու առաջքը առնելու նըպատակով:

* Մեծ Գորելեանին առթիւ, ծանօթ երգչան-դաշնակահար Գարութին էֆ. Սինանեան հեղինակած է զմալիլի մորս մը Մեհրուպեան մեղեդի եւ Քայլերդ անուամբ, որմէ 100 օրինակ նուիրած է Կեդր. Յանձնախումբին:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ ՄԷՋ

Կէտիկ-Բաշայի մէջ յառաջիկայ Ազգ. Մեծ Գորելեանը շքեղապէս տօնելու համար՝ ամիսէ մը ի վեր կարգադիր երկսեռ երկու մասնախումբեր ժրջանորէն կ'աշխատին և արդէն գեղեցիկ ծրագիր մը պատրաստած են, որուն իրականացումը այժմէն ապահոված են: Հանդէսին մէջ չորս բանախօսութիւններ պիտի ըլլան՝ 1/4 ժամ տեւող. նոյնպէս բանաստեղծ Պ. Լեւոն Լսաճանեան գ. երու գիւտին նուիրած իր գեղեցկահիւս մէկ քերթուածը պիտի արտասանէ, կիներու և այրերու կողմէ ալ ջանազան անակնկալներ տեղի պիտի տւենան: Վարժարանին և եկեղեցւոյ շրջափակը, ինչպէս նաև թաղին հայ տունները պիտի շքեղազարդուին ու լուսազարդուին:

Մեծ տօնին ի յիշատակ՝ ժողովրդեան բաժնուելու համար, արդէն պատրաստուած են գեղեցկադիտական քարթեր և զարգասեղներ:

Հանդէսը նիւթապէս այ արդիւնաւորելու համար ամէն միջոց խորհուած է: Մանրամասնութիւնք թաուցիկով ժողովրդեան պիտի հաղորդուին:

* Հայ տառերու գիւտին հազարհինգհարիւրամեայ և հայ տպագրութեան չորեքդարեան կրկնակ յորելեանները՝ Սամաթիոյ մէջ ևս փայլուն կերպով տօնելու համար, կազմուած է յորելեանական յանձնաժողով մը բաղկացեալ թաղին ու շրջակայ նաուլը-գարու, Ալիբը-Մէրմէր և Էթմէլյան թաղերու մէջ գործող բոլոր պատանական մարմիններու ու յարանուանութեանց ու զանազան ընկերակցութեանց ներկայացուցիչներէն: Յանձնաժողովը ձեռնարկած է արդէն գործի և սկսած է մեծ պատրաստութիւններ տեսնել, ազգային սոյն եզական տօնախմբութիւնները փայլուն և արդիւնաշատ ընծայելու համար:

Առաւօտուն հանդէսին եկեղեցական մասը պիտի տօնուի շքեղապէս և պիտի պատարագէ Գեբ. Գնէլ Սրբազան, երգեցողութիւնք պիտի կատարուին Սամաթիոյ, Նաուլը-Գարուի և Ալիբը-Մէրմէրի զպարաց-դասերուն կողմէ, իսկ ժողովրդական մասը տեղի պիտի ունենայ կէս օրէ վերջ «Ժողովուրդ» Լսարանին մէջ և պիտի ունենայ խիստ ճոխ և հաճոյալից յայտագրով գիւերային բաժին մը ևս որուն ի մէջ այլոց պիտի մասնակցին թաղին «Մասիս» նուազախումբը և Ժ. Լ. Միւրթեան «Գողթեան» երկսեռ երգչախումբը, նաև Ժ. Լ. Միւրթեան «Ազատ Բեմ» թատերախումբը: Հանդէսին մանրամասն յայտագիրը յառաջիկայ շաբաթ օր մասնաւորապէս պիտի հրատարակուի:

* Սկիւտարի «Վոսփոր» մարմնամարդական Ակումբը 10 դր. կը նուիրէ ի նպաստ կրթական «Յօնտ»: